ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)
փորձաքննության և վերլուծությունների վարչության
հետբուհական կրթության որակի ապահովման բաժնում (այսուհետ՝ Բաժին)
փորձագետ ներգրավելու մասին**

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1. աստիճանաշնորհման և գիտական կոչումների որակավորման գործերի ուսումնասիրում և ըստ արդյունքի համապատասխան եզրակացությունների ներկայացում,
2. գիտությունների թեկնածուներին ատենախոսությունների գիտական ղեկավար նշանակելու թույլտվության գործընթացի իրականացում,
3. գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծման, վերակազմավորման և լուծարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների իրականացնում,
4. գիտական աստիճանաշնորհման համակարգի և գիտական ու գիտակրթական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակման, համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքերին մասնակցություն,
5. գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի և չափանիշների մշակման, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների աշխատանքի կանոնակարգի մշակման աշխատանքներին մասնակցություն,
6. ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերի հաստատման աշխատանքերին մասնակցություն,
7. օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմները Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմներին համապատասխանեցման որակավորման գործերի ուսումնասիրման աշխատանքների իրականացում,
8. որակավորման մասնագիտական քննությունների հանձնաժողովների կազմերի ձևավորման աշխատանքերի իրականացում,
9. գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհող գիտական մասնագիտությունների անվանացանկի կազմման աշխատանքների իրականացում,
10. Բաժնի լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստում:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. բարձրագույն կրթություն,
2. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության

մասին» օրենքների և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները

1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն,

3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. լուսանկար 1 հատ (3x4 չափի),
2. դիմում (ձևը կցվում է),
3. անձնագիր (ՀԾ համարանիշ),
4. դիպլոմ (դիպլոմներ),
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
6. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
7. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է),
8. ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թվականի հունվարի 18-ը: